

ԿՐՑՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԴԱԳԱՂԻ ԱՌԱՋ

(Բարութեան սերմերից)։

Երբ մի երկրի գլխին ձախորդութիւն է գալիս—հիւանդութիւն, սով, պատերազմ, այն ժամանակ ժողովրդի մէջ ինչ որ կայ լաւագոյն զարթնում է, առանձին եռանդով գործի ձեռք զարնում։ Նուիրում են կոպէկներ և հազարներ, մոռանում են սովորական յարմարութիւններն ու հանգստութիւններն, ընդհանուր գործի համար մէջ տեղ են բերում իրանց ոյժը, առողջութիւնը, նոյն իսկ կեանքը։ Ի սէր տանջուողների կրում են ցուրտ և քաղցածութիւն։ Հիւանդանում են ժանդատենդով, չափազանց աշխատանքից ուժասպառ են լինում և ընկնում մեռածի պէս։ Զգում են, որ չի կարելի ձեռները ծալած նստել. ամօթ և նախատինք է նստել տանը և հանգստութիւն վայելել, երբ հիւանդութեանց կամ սովի հարուածների տակ անօգնական ոչնչանում են եղբայրների։ Սակայն որքան էլ մեծ և ահարկու լինի այս կամ այն թշուառութիւնը, հիւանդութիւնը, սովն ու պատերազմը, դրանք բոլորը տեղական, ազգային, պատահական ժամանակաւոր չարիքին։ Կայ չարիք հանրամարդկային, համատարած, դարեւոր չարիք։ Այդ չարիքն է՝ հոգեւոր սովը, «մարդկանց» պակասիլը. մարդկանց մէջ Աստուածային արդարութեան ջնջուիլը, անօրէնութեան յաղթանակը։ Մենք սովորաբար շատ կարճատես ենք. միայն տեսնում ենք աչքներիս տակ եղածը։ Մեր մէջ թոյլ զարգացած է բարոյական զգացմունքը։ Մենք սթափուում ենք միայն այն ժամանակ, երբ արդէն խիստ ուժգին են խփում մեր նեարդերին, չլացնում է մեզ որ և է երևոյթ իւր յանկարծակիւթեամբ և այդ պատճառով բարոյական չարիքի ճնշմանը մենք թոյլ

ենք արձագանք տալիս և կամ բողոքովին լռում ենք, ինչպէս դարևոր չարիքի, որ ամենուրեք և ամեն ժամանակ հաւասարապէս տարածուած է։ Այն ինչ ամեն տեսակ թշուառութեան գլխաւոր արմատն է բարոյական չարիքը և սիրոյ ու կատարեալ արդարութեան բարձրագոյն սկըզբունքների բացակայութիւնը կեանքի մէջ։ Յիսուս Քրիստոս առողջացնելով մարմնով հիւանդին՝ ճանապարհ դնելով ասաց «Ե՛րթ և մի ևս մեղանչիր»։ Խորապէս մտածեցէք այդ խօսքերի վրայ և այն ժամանակ կհասկանաք, որ նոյն իսկ այնպիսի դուռ ֆիզիքական թշուառութեան հիմնական պատճառը, ինչպէս, օրինակ, ժողովրդական սովն է, ոչ այնքան երկրի ուժասպառ լինելու մէջն է. որքան այն ցաւալի երեւոյթի մէջ, որ մեր սրտերը դատարկ են կենդանի եղբայրական սիրուց, որ չունենք աւետարանական հոգատարութիւն մեր փոքր եղբօր՝ տգէտ, խաւարամիտ ժողովրդի վրայ։

Դարևոր բարոյական ախտի սոսկալի ոյժի ամենատխուր և համոզեցուցիչ ապացոյցն է այս մեր առաջ դրուած Գողգոթայի վշտակրի հայհոյուած, թքուած դէմքի պատկերը։ Ի ստեղծմանէ տշխարհի մի անգամ միայն Աստուած կատարելապէս միացաւ մարդու հետ, Աստուծոյ բոլոր արդարութիւնը և ողորմածութիւնը մարմնացաւ երկրի վրայ և ահա դոյն իսկ Արդարութեան վրայ մարդիկ ծիծաղեցին, թքեցին և խաչեցին Նրան։

Ահա այդ ախտի, բոլոր ժամանակների և ամեն տեղի այդ հիմնական թշուառութեան դէմ Յիսուս հրաւիրում է կռիւ մղել, յարատեւ, անխնայ կռիւ։ Եւ նա ինքը այդ կռուին է նուիրում իւր ամբողջ անձը։ Նայեցէք ճրքան անձնուէր աշխատանքով լի են Նրա բոլոր օրերը։ Նրա մօտ գիշերով գալիս է Նիկողիմոսը—երկիւղ և ամօթ կրելով մարդկանցից—Յիսուս սիրով նուիրում է նրան իւր գիշերուայ հանգստութիւնը, որի խիստ կարիքն ունէր ամբողջ օրը Երուսաղեմի փողոցներում և հրապարակներում ժողովրդին քարոզելուց յետոյ։ Եւ կամ երբ նա դադրած և սոված նստած էր Յակովբի ջրհորի մօտ,


անհիւրնկալ Սամարացի կինը ճանաչեց Նրան իբրեւ այնպիսի Մարդ, որ աւելի փափագում է իւր հոգու փրկութեանը, քան ջրին, չնայելով օրուայ տաքութեանը և ծարաւ լինելուն։ Եւ կամ երբ Նա Գեթսեմանի պարտիզում մահուան վշտին դէմ էր մաքառում, իւր աշակերտների հոգիները նոյնքան թանգ էին, որքան և ուրիշ ժամանակ։ Եւ կամ երբ արիւնաթաթախ՝ խաչի վրայ բարձրացած էր, իւր դժգոյն շրթունքներով խորապէս զգացուած մխիթարում է աւագակին, որ ի սրտէ զղջալով Նրա հետ միասին վերջ է դնում իւր անմաքուր կեանքին։

Եւ այդ բոլորի փոխարէն Յիսուս չի ակնկալում պարգևի, չի որոնում գովասանք. Նա միշտ տեսնում էր իւր առաջ Գողգոթան, գիտէր թէ ինչ է սպասում իրան. գազանացած ամբոխը պիտի ջարդէր այն ձեռները, որոնք կերակրել էին նրա քաղցածներին, պիտի թքէին այն շրթութունքների վրայ, որոնցով Նա սիրոյ և մխիթարութեան այնպիսի պատուէրներ էր — տուել։ Նա դագաղի միջից տուն էր վերագարծրել Նայինի այրու որդուն, յարութիւն էր տուել Յայրոսի աղջկանը և ի փոխարէն այդ բոլորի՝ ժողովուրդը խաչի պիտի դատապարտէր Նրան. պիտի գոչէր. «ի խաչ հան զդա, զԲարաբայն արձակեան, զՅիսուս ի խաչ հան»։

Այդ բոլորը գիտէր Նա. բոլորը նախատեսնում էր և այնուամենայնիւ ասում էր. «Ես պէտք է կատարեմ այն գործը, որի համար ուղարկուած եմ»։ Ինչ էլ սպասելու լինի ինձ այնտեղ, ես չեմ կարող դատարկ մնալ։ Նախատելի է օգտուել կեանքի բարիքներից, երբ շուրջը կոտորած է անում անարդարութեան և չարութեան սոսկալի համաճարակը. երբ բռնութեան, անիրաւութեան ահուելի ալիքները, բարութեան և ճշմարտութեան սրբապիղծ անարգանքը սպանում են մարդկանց մէջ խեղդել ամեն բարութիւն, ազնւութիւն և սրբութիւն, Պէտք է կատարել Ուղարկողի գործը։ Եւ Նա կատարեց այդ գործը, կատարեց կենդանութեան ժամանակ, կատարեց խաչի վրայ, շարունակում է կատարել դագաղի մէջ ամփոփուած։

Իսկ հանգիստ, տանջալից դէմքով կտանի վրայից՝ նա իշխանաբար պատուիրում է մեզ. «Դուք եկել էք դադաղիս մօտ երկրպագելու իմ չարչարանքներիս, համբուրելու իմ փշապատ ճակատը»։ Ասում եմ՝ ձեզ. «Մարդու Որդին եկել է ոչ թէ նրա համար, որ Իրան ծառայեն, այլ նրա համար, որ Ինքը ծառայէ ուրիշներին» (Մատթ. Ի. 28.) «Պնացէք, դուք էլ ծառայեցէք ուրիշներին։ Տարէք ձեր համբոյրը և սէրը աշխարհի մէջ կենդանի տանջուողներին. վեր առէք փշայ պսակները արդարութեան համար հալածուողների գլխից, վեր առէք ճամարտութիւնը խաչից։ Իմ պատկերը տպաւորեցէք ոչ թէ սառն, մեռած, թաղման կտաւի վրայ, այլ կենդանի հոգու, կռանդատ սրտի մէջ. և տարէք իմ պատկերը և իմ արդարութիւնը մարդկանց մէջ։ Եւ թող այդ բանի համար հալածեն ձեզ և նոյն իսկ տանջեն։ Ժողովրդական աղէտի ժամանակ դուք մօռանում էք ձեզ, մօռացէք ուրեմն և կեանքի լաւագոյն ըսպէներում գտնէ յանուն հանրամարդկային վտանգի և աղէտի։ Եթէ դուք կմեռնէք յանուն արդարութեան, արդարութիւնը չի մեռնիլ. նա կբանդի բոլոր արգելքները, կփշրէ կնիքը, դուրս կգայ գերեզմանից։ Արդարութիւնը կենդանի է, միշտ կենդանի է, մարդիկ էլ կենդանի են արդարութեամբ, արդարութեամբ է միայն և կեանքը վայելչանում»։

Ապրիցէք այդ արդարութեամբ և, եթէ հարկաւոր լինի, մեռէք նրա համար։



Ճամարտութիւնը յաղթում է.

Դողգոթայի խաչի վրայ կախուած է Յիսուս նազովբեցին՝ Հրէից թագաւորը։ Դպիրները և փարիսեցիները ուրախ էին։ Նրանք վաղուց է հետամուտ էին սպանելու խոնարհութեան ատելի ուսուցչին, նոր, եղբայրական կենաց Աւետարներին, երկրի վրայ Աստուծոյ արքայութիւնը

Հիմնողին: Նրանք աշխատում էին ժողովրդի մէջ ատելութիւն, անհաշտելի թշնամութիւն բորբոքել դէպի հռոմէականացիք, ամբողջ երկիրը յարուցանել տիրող տարրի դէմ. թօթափել օտարի լուծը, ազատել, ընդարձակել և մեծացնել հրէից թագաւորութիւնը, իսկ Նա քարոզում է սէր դէպի թշնամիները, հեղսութիւն, ամենաներողամիտ խոնարհութիւն: Եթէ թոյլ տրուի Նրան, Նա իւր յետեւից կտանէ բոլոր ժողովրդին և այն ժամանակ պէտք է հրէից փառաւոր և հզօր տէրութիւն կազմելու մտքից: Ձէ, վճռեցին ժողովրդի առաջնորդները՝ քահանայապետները, ծերերը և ծերակոյտի անդամները, աւելի լաւ է թող մի մարդ կորսուի, թէև անմեղ, քան մի ամբողջ ժողովուրդ՝ յաւիտեան ստրկութեան մէջ մնայ:

Եւ նրանք դատապարտեցին Յիսուսին, ծաղրեցին Նրան, խաչեցին երկու չարագործների մէջ: Աշխարհը սարսափեց մարդկանց չարագործութիւնից, երկիրը շարժուեց, արեւը խաւարեց, երկինքը ծածկուեց թանձր ամպով: Խաչեցին, թաղեցին և գերեզմանի վրայ քար դրին, պահապաններ կանգնեցրին և կնքեցին: Նրանց թւում էր, որ յաղթանակը իրանք են տանում, իրանց ոյժի, խորամանկութեան, ժողովուրդը դաւաւելու հմտութեան դէմ ոչ ոք ոչինչ չի կարող անել: Յիսուս իւր քարոզներով շուրջը հաւաքեց անթիւ բազմութիւն և նրանք հէնց այդ ամբոխին զինեցին Նրա դէմ և ժողովուրդը պահանջեց Բարաբբայ աւագակին ազատել, իսկ Յիսուսի համար աղաղակեց. «ի խաչ, ի խաչ հան զդա»: Յիսուս ձեռքի հպումով յարութիւն էր տալիս մեռածներին, իսկ նրանք հէնց իրան մահուան դատապարտեցին և խաչեցին, ինչպէս չարագործի: Այժմ նրանք հանգիստ են: Կատարելիք գործերը արգելքի չեն հանդիպիլ: Նրանք այժմ ազատ կարող են ժողովրդի մէջ չար որոմն սերմանել: Յիսուս քարով ծածկուած գերեզմանի մէջ է: Գերեզմանից վերադարձ չկայ:

Սակայն Յիսուս Քրիստոս մեռնելիս ի զուր չէր վերջի անգամ արտասանել «ամենայն ինչ կատարեալ է»: Այն-

տեղ, որտեղ չարութիւնը տեսնում էր իւր յաղթանակը, Փրկիչը ցոյց էր տալիս նրա կորուստը և բարութեան յաղթանակի սկիզբը: Գողգոթայի վրայ դժոխքի բոլոր ոյժերը զինուել էին Աստուածային սիրոյ և արդարութեան դէմ, սպառուել էին իրանց բոլոր իշխանութիւնը և, միևնոյն ժամանակ, ցոյց էին տուել իրանց կատարեալ, վերջնական անզօրութիւնը բարութեան դէմ: Այլ ևս չարութիւնը ինչ կարող է աւելացնել գերեզմանի քարի, կնիքի և պահապանների վրայ. — ոչինչ. բարութեան բոլոր միջոցները սպառուել էին — կաշառք, մատնութիւն, սուտ վկայութիւն, կոպիտ բռնութիւն: Մեխեցին, քարով ծածկեցին, մոմ հալեցին — կնքեցին և ահա երկու օր անցաւ.... պահապանները փախան, գերեզմանի քարը գլորուեցաւ, իսկ Քրիստոս յարութիւն առնելով դուրս եկաւ գերեզմանից:

Խաչուած Քրիստոսը յարութիւն առաւ. նրա հետ միասին յարութիւն առան խաչուած ճշմարտութիւնը, հայհոյուած սէրը, թքուած — մրուած խոնարհութիւնը: Երկրի վրայ չկայ այն ոյժը, որը կարողանայ դէմ դնել բարութեանը, չկայ այն իշխանութիւնը, որ կարողանայ քանդել սիրոյ զօրութիւնը՝ բոլորովին կանգնեցնել ճշմարտութեան յաղթանակը:

Պետրովից Թարգմ. Գրիգոր Բեկյ. Նոր-Արեւեանց.

